ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2020 թ. սեպտեմբերի 29 N 276

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇՂԱՐՇԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 42-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի նոյեմբերի 29-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2020 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N649-Ա հրամանը, 2020 թվականի սեպտեմբերի 11-ից 15-ը Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շղարշիկի համայնքապետարանում իրականացված իրավական հսկողության արդյունքում պարզվել է, որ Շղարշիկ համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասում «Հանքաղբյուր» ՍՊԸ-ի կողմից առանց հողամասի նպատակային նշանակության փոփոխության կատարվում է ուղիղ կտրվածքով տուֆ քարի արդյունահանում:

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շղարշիկ համայնքի ղեկավար Հովհաննես Հարությունյանի կողմից խախտվել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^9 և 54-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շղարշիկ համայնքի ղեկավար Հովհաննես Հարությունյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ **900005242921** հաշվեհամարին:

2. Դադարեցնել հողամասի ոչ նպատակային օգտագործումը և միջոցներ ձեռնարկել օրենքով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխության ուղղությամբ:

3. Սույն որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շղարշիկ համայնքի ղեկավար Հովհաննես Հարությունյանին:

4. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել ՀՀ Արագածոտնի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-ՄՀՊՏ ավագ մասնագետ՝ Գրիգոր Մանուկյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Շղարշիկ համայնքի ղեկավար Հովհաննես Հարությունյանին հանձնելու պահից, որը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ այն ստանալու կամ դրա մասին պատշաճ ծանուցվելու պահից երկու ամսվա ընթացքում:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ